



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

No 04 - Լ

«30» հունիսի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 4-րդ ենթակետով և 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության լեզվական պետական քաղաքականության հիմնադրույթները՝ ըստ հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



6/30/2026

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարի
2026 թվականի հունիսի 30-ի
07 -Լ հրամանի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՔԱՆ	4
1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ.....	5
2. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ	9
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ	9
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ	12
5. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	13
6. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ	14
7. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	15
8. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	16

ՆԱԽԱԲԱՆ

1. Լեզվական պետական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետության պետական կառավարման օրակարգում է 1990-ական թվականների սկզբից: Նորանկախ Հայաստանի Հանրապետության կայացման կարիքներից էր բխում և դրան էր ուղղված պետական ու կրթական համակարգերում հայերենի՝ որպես պետական լեզվի ինստիտուցիոնալացումն ու դրան համապատասխան իրավական մեխանիզմների ստեղծումը: «Լեզվի մասին» օրենքով և այլ օրենքներով ամրագրվել են լեզվական իրավունքներն ու պարտականությունները: Ներառականությունն ու սոցիալական համակեցությունն այն հիմնական սկզբունքներն են, որոնք դրված են Հայաստանի Հանրապետության օրենսդրության հիմքում և որոնք հիմք են դարձել նաև Հայաստանի Հանրապետության լեզվական պետական քաղաքականության հիմնադրույթները (այսուհետ՝ Հիմնադրույթներ) մշակելու համար:

2. Հիմնադրույթներն ուրվագծում են լեզվական պետական քաղաքականության տեսլականը թվանշային տեխնոլոգիաների զարգացման և Հայաստանի Հանրապետությունում կառավարման, տնտեսական, գիտական, կրթական ու մշակութային ինստիտուցիոնալ բարեփոխումների արդի մարտահրավերների համատեքստում: Ըստ այդմ՝ դրանք ամրագրում են՝

ա) Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերը և լեզվական կենսունակ միջավայր ապահովելու անհրաժեշտությունը,

բ) լեզվական պետական քաղաքականության սկզբունքները,

գ) լեզվական պետական քաղաքականության չափումները,

դ) լեզվական պետական քաղաքականության իրականացման մեխանիզմները և արդյունքների գնահատումը:

3. Հիմնադրույթները բխում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, «Լեզվի մասին» օրենքից և կոչված են իրականացնելու «Հայաստանի վերափոխման 2050 թվականի ռազմավարությամբ» լեզվի բնագավառում սահմանված նպատակները:

4. Հիմնադրույթները մշակելիս հաշվի են առնվել «Լեզվի մասին», «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին», «Տեսալսողական մեղիայի

մասին», «Կրթության մասին», «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքներում, «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050-ում» և «Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինում» ամրագրված դրույթները: Միաժամանակ օգտագործվել են «Հայերենի թվանշային հավասարության զեկույցի», տարածաշրջանային և միջազգային լեզվական պետական քաղաքականությունների դինամիկան արտացոլող ուսումնասիրությունների, Հայաստանի Հանրապետության սոցիալական ու մշակութային ինտեգրման ռազմավարությունների և դրանց վերաբերող զեկույցների արդյունքները, մասնագիտական գրականություն, ոլորտին վերաբերող այլ նյութեր:

5. Հիմնադրույթներից բխող առաջնահերթ ուղղություններն ըստ վերաբերելիության կինտեգրվեն Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թ. փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու մասին N 252-Լ որոշման» 159-րդ կետով սահմանված ռազմավարություններում և դրանցից բխող ռազմավարական ծրագրերում, ինչպես նաև հիմք կդառնան օրենսդրական փոփոխությունների համար:

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

6. Հիմնադրույթների հիմքը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածն է, ըստ որի՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Հիմք է ընդունվել նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 15-րդ հոդվածը, ըստ որի՝ հայոց լեզուն և մշակութային ժառանգությունը գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո:

7. Սահմանադրության 56-րդ հոդվածով սահմանվում է նաև ազգային և էթնիկ ինքնությունը պահպանելու իրավունքը, ըստ որի՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք: Ըստ «Լեզվի մասին» օրենքի 1-ին հոդվածի՝

Հայաստանի Հանրապետության տարածքում երաշխավորվում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը:

8. «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» և «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայի հիմնական դրույթների ապահովման շրջանակում մշակված «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով սահմանված են ազգային փոքրամասնությունների կյանքի և մշակույթի մասին տեսալսողական հաղորդումներ հեռարձակելու հատուկ պայմանները:

9. Ըստ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 18-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը հայերեն ժեստերի լեզուն ընդունում է որպես հաղորդակցման, ուսուցման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց: «Լեզվի մասին» օրենքում սահմանված է «ժեստերի լեզու» հասկացությունը:

10. «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքներով կարգավորված են նաև Հայաստանի Հանրապետությունում ուսուցանվող և կրթական ու գիտական նպատակներով գործառվող պետական և մյուս լեզուների հարաբերությունները:

11. Ըստ «Լեզվի մասին» օրենքի 1.1-ին հոդվածի՝ պետական լեզվաքաղաքականությունը լեզվի բնագավառում պետության ձեռնարկած միջոցառումների ամբողջությունն է՝ ուղղված պետական լեզվի շահերի պաշտպանությանը, բոլոր ոլորտներում պետական լեզվի կենսագործունեության ապահովմանն ու զարգացմանը:

12. Այս համատեքստում լեզվական պետական քաղաքականությունը, ըստ էության, ինստիտուցիոնալ մակարդակում չի ձևակերպվել որպես Հայաստանի Հանրապետության լեզվական բազմազանության պահպանմանն ու զարգացմանն ուղղված միասնական քաղաքականություն:

13. Հատվածական այս մոտեցումը խոչընդոտել է լեզվական պետական քաղաքականությունը որպես ինստիտուցիոնալ-իրավական, սոցիալական, կրթական-մշակութային ինտեգրված քաղաքականություն դիտարկելուն, որի պայմաններում լեզվական պետական քաղաքականություն իրականացնող պետական և տեղական

ինքնակառավարման մարմինների միջոցառումները ոչ միշտ են հարաբերվել սոցիալ-տնտեսական կյանքի կարիքներից բխող սոցիալ-հաղորդակցական կարիքներին:

14. Միասնական քաղաքականության իրականացման բացակայությունը (այսուհետ՝ Միասնական քաղաքականություն) բացասաբար է անդրադառնում լեզվական-հաղորդակցական առումով ներառական միջավայր ապահովելու և լեզվական բազմազանության համատեքստում սոցիալ-հաղորդակցական համակեցության մշակույթ արմատավորելու վրա:

15. Այս պայմաններում ոլորտային կարգավորումները մշտապես շրջանցել են Հայաստանի Հանրապետության թվանշային փոխակերպման լեզվական բաղադրիչը, ինչը բացասաբար է անդրադառնում Հայաստանի Հանրապետության տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման վրա՝ արդի տեխնոլոգիական զարգացումներին համահունչ լեզվական տեխնոլոգիաներ ապահովելու առումով:

16. 2025 թվականին մշակված «Հայերենի թվանշային հավասարության զեկույցը» Եվրոպայի 87 լեզուների շարքում հայերենը տեղակայում է լեզուների թվանշային հավասարության երրորդ՝ «Հատվածական տեխնոլոգիական աջակցություն ունեցող լեզուների» խմբում: Ձեկույցն ամրագրում է, որ հայերենը թեև հաղթահարել է թույլ կամ բացակայող տեխնոլոգիական աջակցության փուլը, բայց բավարար հարուստ չէ թվանշային ռեսուրսներով, միայն հատվածաբար է ապահովված թվանշային կենսունակության համար անհրաժեշտ գործիքակազմով ու դեռ շարունակելու է առերեսվել թվանշային վտանգվածության խնդրին:

17. Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունվարի 8-ի N 16-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինը» պետության խորքային կառուցվածքային վերափոխման ռազմավարական ուղղություն է սահմանում Արհեստական բանականությունը (ԱԲ)՝ հանրային քաղաքականության, բիզնես գործընթացների և կրթական մոդելների համար (կետ 51):

18. «Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինը» ԱԲ կիրառումը դիտարկում է համաշխարհային մրցակցության նոր հարթակ, որի շրջանակում Հայաստանը ձգտում է գտնել իր ինքնությունը պահպանող դիրք՝ միևնույն ժամանակ

նկատելով, որ ԱԲ-ի հնարավորությունների լիարժեք իրացման համար անհրաժեշտ է ապահովել էլեկտրամատակարարման շարունակականություն, ցանցերի հուսալիություն և էներգիայի պահպանման հզոր կարողություններ (կետ 51):

19. Էլեկտրամատակարարման շարունակականության, ցանցերի հուսալիության, տվյալային կենտրոնների կողքին ԱԲ ինքնավարության համար հիմնարար նախապայման է լեզուն, որով կառուցվում և կիրառվում են ԱԲ գործիքները:

20. Այս համատեքստում առաջնային է դառնում թվանշային միջավայրում հայերենի կենսունակության համար անհրաժեշտ գործիքակազմի ապահովումը, որը թույլ կտա ոչ միայն իրացնել լեզվի ամբողջ ներուժը հանրային կյանքի բոլոր ոլորտներում՝ արդի սոցիալ-տնտեսական ու տեխնոլոգիական զարգացումներին համահունչ, այլ նաև կաջակցի Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ արդիականացման ներկա մարտահրավերներին:

21. ԱԲ տեխնոլոգիաներն իրենց բնույթով լեզվակենտրոն են, ինչը նշանակում է, որ «Հայաստանի տնտեսական և ինստիտուցիոնալ վերափոխման դոկտրինով» սահմանված կառավարման համակարգի խորքային վերափոխման մեջ ԱԲ տեխնոլոգիաների ներդրումն անհնարին կլինի առանց պաշտոնական լեզվով՝ այս պարագայում հայերենով, սեփական լեզվական մոդելների կառուցման ու հետևողական զարգացման:

22. Հայերենով որակյալ տվյալների առկայությունը, լեզվական տեխնոլոգիաների առաջնային գործիքակազմի, սեփական լեզվական մոդելների մշակումը հնարավոր կդարձնի ոչ միայն տնտեսության լիարժեք վերափոխումը, այլ նաև կամրապնդի Հայաստանի դիրքը ԱԲ-ի պայմանավորած գլոբալ մրցակցության մեջ:

23. Թվանշային միջավայրում հայերենի կենսունակության բարձրացումը ուղղակիորեն արձագանքում է «Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050-ում» լեզվին վերաբերող դրույթներին, ըստ որոնց՝ հայոց լեզուն և գրերը, հայ գրականությունը, ներառյալ թարգմանական գրականությունը, գիտելիքը, գիտությունը սահմանված են արժեքներ, իսկ հայերենի իմացության մակարդակի բարձրացումը՝ ազգային նպատակ:

2. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

24. Հիմնադրույթների նպատակը Հայաստանի Հանրապետության լեզվական բազմազանության պահպանմանը, լեզվական կենսունակ միջավայրի ապահովմանն ու շարունակական զարգացմանն ուղղված միասնական քաղաքականության մշակումն է՝ որպես պետության հարատևության համընթաց համակարգային բաղադրիչ:

25. Լեզվական կենսունակ միջավայրը Հիմնադրույթների իմաստով առանձին անձանց ու տարբեր խմբերի լեզվի և խոսքի յուրահատկության պահպանմամբ սոցիալ-հաղորդակցական համակեցության մշակույթն ամրապնդող գործուն այն համակարգն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերի մաս կազմող լեզուների՝ գրավոր և բանավոր, թվանշային կամ այլ եղանակներով պահպանմանն ու զարգացմանը, սոցիալ-հաղորդակցական բազմազանության ապահովմանը:

26. Միջնաժամկետ հեռանկարում լեզվական պետական քաղաքականության տեսլականը Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ վերափոխմանը նպաստող լեզվական կենսունակ, այդ թվում՝ թվանշային էկոհամակարգի ստեղծումն է և սոցիալ-հաղորդակցական համակեցության մշակույթի ամրապնդումը:

27. Երկարաժամկետ հեռանկարում լեզվական պետական քաղաքականության տեսլականը հայերենի իմացության չափելի գործիքակազմի ներդրումն է, հայախոսության մակարդակի բարձրացմանը նպաստող ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծումը, լեզվական տեխնոլոգիաների և հայերենի լեզվական մոդելի ներդրմամբ հայերենի խորքային ինտեգրումը միջազգային լեզվական-տեղեկատվական և ԱԲ համակարգերում, հումանիտար գիտակարգերում:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐԸ

28. Հայաստանի Հանրապետության լեզվական բազմաշերտ համապատկերը ներառում է հայերենն իր ներքին բազմազանությամբ, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունում տարբեր կարգավիճակ ունեցող և հաղորդակցական տարբեր իրավիճակներում գործառվող մյուս լեզուները:

29. Ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 20-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Ըստ «Լեզվի մասին»

օրենքի՝ Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է, որը հայոց լեզվի քերականության, բառապաշարի, արտասանության կանոններին ենթարկվող, պաշտոնական գործառույթներին և հասարակության գրական ու գիտական պահանջներին ծառայող լեզուն է:

30. Արդի շրջանում հայերենի զարգացումն ու նորմավորումն ընթացել է երկու տարբերակով՝

1) **արևելահայ**, որն առնվազն վերջին հարյուրամյակում պետական-պաշտոնական լեզվի գործառույթն է ունեցել, ինչպես նաև ապահովել է գրական, գիտական ու մշակութային ոլորտների գործունեությունը,

2) **արևմտահայ**, որը լինելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածի լեզուն՝ շարունակում է մնալ Սփյուռքի տարբեր գաղթօջախներում և Հայաստանի Հանրապետությունում նախկին Օսմանյան կայսրության հայաբնակ նահանգներից բռնագաղթած հայերի ու նրանց ժառանգների սոցիալական, գրական ու մշակութային կյանքում գործածվող (ժառանգված) և կրթական հաստատություններում ուսուցանվող՝ հայերենի նորմավորված մյուս տարբերակը:

31. Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերի մաս են հաղորդակցական տարբեր իրավիճակներում փոխգործակցող և լեզվական սոցիալականացում ապահովող հայերենի հետևյալ տարբերակները՝

1) **առտնին լեզուն՝** հասարակության լայն շերտերին բնորոշ ամենօրյա շփման և առօրյա հաղորդակցության լեզու, որը կարող է լինել գրական լեզվի բանավոր տարբերակը, որևէ բարբառ, խոսվածք և այլն.

2) **բարբառները՝** տեղական լեզվի խոսվածքի բնույթ ունեցող, որևէ մարզով կամ շրջանով և կամ մեկ-երկու գյուղերով սահմանափակված, պատմականորեն առաջացած, բնականորեն մշակված, սահմանափակ միջավայրի լեզու.

3) **արգոն կամ ժարգոնը՝** սոցիալական, մասնագիտական որոշակի խմբին բնորոշ կամ վերջինիս հաղորդակցական յուրահատուկ կարիքներին արձագանքող «սոցիալական բարբառ»:

32. Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերի մաս են և պետական հոգածության ու պաշտպանության ներքո են **գրաբարը, միջին հայերենը,**

ինչպես նաև տարբեր եղանակներով վկայված և այսօր իրենց գործածության բնիկ աշխարհագրությունը կորցրած հայերենի բարբառներն ու խոսվածքները:

33. Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերի մաս է նաև **հայերեն ժեստերի լեզուն:**

34. Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերը ներառում է նաև «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» իմաստով Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուները՝ **ասորերենը, եզդիերենը, հունարենը** (Հայաստանի հույն ազգաբնակչության պոնտիերեն բարբառը), **ռուսերենը** և **քրդերենը**, ինչպես նաև նրանցով ստեղծվող մշակույթը:

35. Ուսումնական և գիտական նպատակներով Հայաստանի Հանրապետությունում գործածվում են նաև **օտար՝** եվրոպական և արևելյան **լեզուներ:**

36. Լեզվական պետական քաղաքականության իրականացման առանցքային գործիքը կրթական համակարգն է՝ նախադպրոցական կրթությունից մինչև բարձրագույն կրթություն, գիտություն և ցկյանս ուսումնառություն, որն ապահովում է լեզվական գրագիտության կարողունակության զարգացումը, լեզվական բազմազանության ճանաչումը և պետական լեզվի արժեքային գիտակցումը: Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում 2025–2026 ուսումնական տարվա դրությամբ պարտադիր ուսուցանվում է առնվազն 2 օտար լեզու. **ռուսերենը** (1327 դպրոց), **անգլերենը** (1173 դպրոց), **ֆրանսերենը** (255 դպրոց), **գերմաներենը** (214 դպրոց), **պարսկերենը** (17 դպրոց), **չինարենը** (6 դպրոց), **վրացերենը** (4 դպրոց), **թուրքերենը** (4 դպրոց), **ադրբեջաներենը** (3 դպրոց), **իսպաներենը** (2 դպրոց), **իտալերենը** (2 դպրոց), **արաբերենը** (1 դպրոց):

37. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում 2025–2026 ուսումնական տարվա դրությամբ որպես օտար լեզու ուսուցանվում են **անգլերենը, գերմաներենը, ռուսերենը և ֆրանսերենը:** Օտար լեզուների ուղղությամբ մասնագիտացած Հայաստանի Հանրապետության բուհերում ուսուցանվում և ուսումնասիրվում են նաև **իսպաներենը, իտալերենը, վրացերենը, պարսկերենը, արաբերենը, չինարենը, թուրքերենը, ադրբեջաներենը, կորեերենը, ճապոներենը,**

բուլղարերենը, լեհերենը, հունարենը, ռումիներենը, հին սլավոներենը, լատիներենը, չեխերենը և այլ լեզուներ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

38. Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերի մաս կազմող բոլոր լեզուներն ապահովում են Հայաստանի Հանրապետության լեզվական միջավայրը, որը գրավոր և բանավոր, թվանշային կամ այլ եղանակներով մատչելի բոլոր լեզուներով սոցիալ-հաղորդակցական բազմազանության ամբողջությունն է: Լեզվական միջավայրում են ձևավորվում անձի լեզվական հմտությունները:

39. Լեզվական միջավայրի մաս են լեզվական տարատեսակությունները (ռեգիստրները), որոնց սոցիալ-հաղորդակցական գործառույթները փոխլրացնող հարաբերության մեջ են միմյանց հետ:

40. Պետության պարտավորությունն է ապահովել սոցիալ-հաղորդակցական տարբեր իրավիճակներում ու նպատակներով կիրառվող լեզվական բազմազանության դրսևորման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ մեխանիզմներ:

41. Հայաստանի Հանրապետության լեզվական միջավայրի կենսունակությունն ապահովվում է լեզվական համապատկերի պահպանմանն ու զարգացմանն ուղղված՝ սոցիալական կյանքի կարիքների գնահատմամբ իրականացվող օրենսդրական փոփոխություններով և ծրագրերով:

42. Հայաստանի Հանրապետության լեզվական միջավայրում հայերենը գիտելիքի, տեղեկատվության և հանրային հաղորդակցության հիմնական կրող լեզուն է պետական ու հասարակական համակարգերում, իսկ օտար լեզուներն այդ միջավայրն ընդլայնող և միջազգային փոխճանաչողությանը նպաստող օժանդակ միջոցներ են ու չեն փոխարինում հայերենին:

43. Լեզվական միջավայրի զարգացումը չափելի է գրավոր և բանավոր, թվանշային կամ այլ եղանակներով շրջանառվող խոսքի դինամիկայի ուսումնասիրությամբ, լեզվավիճակի պարբերական՝ քանակական ու որակական տվյալների վերլուծությամբ:

44. Լեզվական միջավայրը չափելի է լեզվական վիճակագրության, լեզվական տեխնոլոգիաների հասանելիության, հայերեն թվանշային բովանդակության ծավալի, հայախոսության մակարդակի և լեզվական մասնակցության ցուցանիշներով:

5. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

45. Լեզվական պետական քաղաքականությունն ուղենշում է Հայաստանի Հանրապետության լեզվական միջավայրի զարգացման հնարավորությունները՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվող սոցիալական, ազգային, մշակութային, կրոնական և էթնիկ խմբերի **ներառականության** ու **սոցիալ-հաղորդակցական համակեցության մշակույթ** արմատավորելու նպատակով:

46. Լեզվական պետական քաղաքականության շրջանակում մշակվող ծրագրերը **համահունչ** են Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականություններին, «Լեզվի մասին» օրենքի և հարակից այլ օրենքների հիմնադրույթներին, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին: Դրանք **դինամիկ** կերպով արձագանքում են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքի փոփոխություններին:

47. Հայերենը, որպես **պետական լեզու**, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված հատուկ իրավական կարգավիճակ ունի և պետական-պաշտոնական գործառույթների իրականացման շրջանակում **փոխգործակցում է** Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների, կրթական, գիտական և այլ նպատակներով գործառվող օտար լեզուների հետ:

48. Լեզուն, անմիջականորեն կապված լինելով տարբեր մակարդակներում հաղորդակցության, տեղեկության փոխանակման, կրթություն ստանալու, գիտություն և մշակույթ ստեղծելու, դրանք պահպանելու ու փոխանցելու հետ, ոլորտում մշակված քաղաքականությամբ խթանում է **բաց** ու **թափանցիկ** սոցիալական միջավայրի ձևավորումը՝ նպաստելով **ազգային** ու **համամարդկային** արժեքների ստեղծմանը:

49. Հաղորդակցական կոնկրետ իրավիճակներում ստեղծվող և գործառվող լեզվական տարատեսակությունները լեզվական միջավայրում ապահովում են **խոսույթի բազմազանությունը**՝ առանց այլ խոսույթները խտրականացնելու:

50. Հայաստանի Հանրապետության լեզվական միջավայրի զարգացումը, հատվելով թվանշային դարաշրջանում **տեղեկատվության հասանելիության** և ԱԲ միջավայրում **նոր տիպի գիտելիքի մշակման ու շրջանառման** մարտահրավերներին, ներդաշնակորեն արձագանքում է Հայաստանի Հանրապետության տնտեսության թվանշային փոխակերպման ու պետական կառավարման համակարգի արդիականացման գործընթացներին՝ ապահովելով **չափելի** և իր զարգացման տրամաբանության մեջ **կանխատեսելի լեզվական միջավայր**:

6. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՓՈՒՄՆԵՐԸ

51. Հիմնադրույթների շրջանակում լեզվական պետական քաղաքականությունը պետական ու հանրային կյանքի կարիքներից բխող այնպիսի համալիր գործողությունների մշակում և իրագործում է, որն ապահովում է կայուն զարգացող լեզվական միջավայր: Ըստ այդմ՝ լեզվական պետական քաղաքականությունը ձեռք է բերում հետևյալ չափումները.

1) **իրավական և ինստիտուցիոնալ չափում.** ցույց է տալիս, թե միջազգայնորեն սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ընդունված մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների շրջանակում իրավական ինչ կառուցակարգերով են իրացվում քաղաքացու լեզվական իրավունքները, ինչպես նաև ինստիտուցիոնալ ինչ մեխանիզմներով են պաշտպանվում այդ իրավունքները.

2) **անվտանգային չափում.** ցույց է տալիս, թե միջազգային նորմերի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակում ինչ գործիքակազմով է ապահովվում լեզվին վերաբերող օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման վերահսկողությունը, ինչպես նաև՝ պետական մեխանիզմների ճկունությունն ու դիմադրողականությունը լեզվական ու մշակութային բազմազանության պահպանման և սոցիալ-հաղորդակցական համակեցության ապահովման հարցում.

3) **սոցիալական չափում.** ցույց է տալիս, թե Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և օտարերկրացիները (ապաստան հայցողներ, փախստականներ, հարկադիր տեղահանվածներ և այլն) ինչ չափով են ներգրավված Հայաստանի Հանրապետության սոցիալական կյանքում՝ մնալով իրենց լեզվական իրավունքն իրացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային կարգավորումների շրջանակում.

4) **մշակութային-կրթական չափում.** ցույց է տալիս, թե ինչպես է Հայաստանի Հանրապետությունում կրթությունն արտացոլում Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերը, ինչպես նաև՝ ինչպես է կրթությունը ձևավորում սոցիալ-հաղորդակցական համակեցության մշակույթ.

5) **տեխնոլոգիական չափում.** ցույց է տալիս, թե տեղեկատվության, գիտելիքի և հաղորդակցության թվանշացումն ինչպես է ազդում լեզվի կենսունակության ու դրա այս կամ այն կարգավիճակի վրա: Սոցիալ-տնտեսական, ինչպես նաև՝ գիտա-հետազոտական և կրթական ինչ ռեսուրսների առկայության պայմաններում է հայերենը և Հայաստանի Հանրապետության լեզվական համապատկերի մաս կազմող լեզվական բազմազանությունը ձևավորում կամ զարգացնում հասանելիություն լեզվական տեխնոլոգիաներին և թվանշային հավասարությանը, ինչպես են լեզվական տեխնոլոգիաներն աջակցում պետության ինստիտուցիոնալ վերափոխմանը, ինչպես նաև՝ ինչպես է լեզվի տեխնոլոգիականացումն ազդում հումանիտար գիտակարգերի արդիականացման վրա.

6) **հայախոսության չափում.** ցույց է տալիս, թե սոցիալ-հաղորդակցական, նաև՝ թվանշային արդի համակարգերի ինչ գործիքակազմով է չափվում հայերենի իմացությունը՝ իր արևելահայ ու արևմտահայ տարբերակներով, ինչպես են հայախոս հանրույթներն արձագանքում սոցիալ-լեզվական միջավայրի փոփոխություններին ու առաջ եկած նոր մարտահրավերներին Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս, ինչպես նաև՝ ինչպես է այս ամբողջն ազդում հայագիտության արդի վերափոխումների վրա.

7) **թարգմանական չափում.** ցույց է տալիս փոխճանաչողությանը միտված միջմշակութային հաղորդակցության զարգացման, ինչպես նաև՝ ազգային և համամարդկային արժեքների փոխտարածելիության աստիճանը:

7. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

52. Հիմնադրույթները կներառվեն Հայաստանի Հանրապետության «Մարդկային կապիտալի և բարեկեցության» ռազմավարության մեջ: Հիմնադրույթներից կրիսեն լեզվի բնագավառին վերաբերող ռազմավարական մոտեցումներ, կմշակվեն ծրագրեր:

53. Հիմնադրույթների իրականացման համար լիազորված պետական մարմնի ներկայացմամբ կհաստատվեն ծրագրեր, որոնք կներառվեն պետական բյուջեում: Հիմնադրույթների իրականացման շրջանակներում հաստատված ծրագրերի ֆինանսավորումը ենթադրում է ոչ միայն պետական բյուջետային միջոցներ, այլ նաև դոնոր կազմակերպությունների ներդրումներ և «պետություն-մասնավոր համագործակցություն»:

54. Հիմնադրույթներն իրականացնում են «Լեզվի մասին» օրենքի 5-րդ հոդվածում նշված մարմինները՝ լեզվի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ինչպես նաև այլ բնագավառները կարգավորող նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

55. Հիմնադրույթների իրականացման շրջանակում կձևավորվեն միջգերատեսչական աշխատանքային խմբեր կամ հանձնաժողովներ/հանձնախմբեր:

56. Հայաստանի Հանրապետության լեզվական միջավայրի կայուն զարգացումը կապահովեն լիազոր մարմնի ենթակայությամբ գործող ենթակառուցվածքները:

8. ԼԵԶՎԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

57. Լեզվական պետական քաղաքականության իրականացման համար լիազորված պետական մարմինը կապահովի «Հայաստանի Հանրապետության լեզվական պետական քաղաքականության հիմնադրույթներից» բխող ծրագրերի մշտադիտարկման մասնակցային և թափանցիկ գործընթացը, հանրությանը կիրազեկի հիմնադրույթների իրականացման առաջընթացի մասին: Այդ համատեքստում՝ Հայաստանի Հանրապետության պետական ու հանրային կյանքում Հիմնադրույթների որակական ազդեցությունը կգնահատվի Հիմնադրույթներից բխող առանձին միջոցառումների ազդեցությունը գնահատող ուսումնասիրությունների միջոցով՝ ըստ միջոցառումների իրականացման ժամանակացույցի:

58. Մշտադիտարկումները և գնահատումները հնարավորություն կտան չափելու իրականացվող ծրագրերի և միջոցառումների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական և սոցիալ-մշակութային կյանքի դինամիկային և թե ինչպես են դրանք անդրադառնում Հայաստանի Հանրապետության տնտեսության,

հանրային ծառայությունների, պետական, կրթական ու մշակութային համակարգերի աշխատանքի վրա:

59. Իրականացվող յուրաքանչյուր ծրագրի և միջոցառման մշտադիտարկմամբ հնարավոր կլինի բացահայտել լեզվական պետական քաղաքականության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը, առաջացած խնդիրները, չնախատեսված ռիսկերը և կատարել համապատասխան փոփոխություններ:

60. Լեզվական պետական քաղաքականության իրականացման դինամիկան կուսումնասիրվի տարեկան մշտադիտարկման շրջանակում՝ վերլուծության միջոցով:

61. Մշտադիտարկումները և գնահատումները իրականացնողը լեզվական պետական քաղաքականության իրականացման աշխատանքները համակարգող մարմինն է: Մշտադիտարկումների և գնահատումների արդյունքները բաց հասանելի են՝ ապահովելով լեզվական պետական քաղաքականության իրականացման թափանցիկությունը և հաշվետվողականությունը:

62. Քաղաքականության արդյունքները և երկարատև ազդեցությունը գնահատելու նպատակով կիրականացվի համալիր ուսումնասիրություն-գնահատում 5-ամյա կտրվածքով: Գնահատումը կիրականացվի անկախ փորձագետների/կազմակերպության կողմից: